

ներու մէջ զարուեստ անոր մարմինն»։ այլ պիտի ըսէր, ըստ Բահիստունի արձանագրու թեան, թէ Արախ « ձերբակալուեցաւ . . . (Գարեհի) բերուեցաւ : Արախ և իւր զխաւոր գործակիցք ի խաչ հանուեցան Բարեկոնի մէջ : Ահա այսպէս մեռան », և ոչ « պատերազմի մը մէջ . . . » :

Ընդունելով որ մեր Արայն առասպելական անձնաւորութիւն մըն է, ինչպէս և Շումիրամն, չեմ կրնար ըսել թէ Պղատունի էրին հետ նոյն չէ. զի երկուքին մէջ ալ պատերազմի մէջ մեռնիլ և վերստին կենդանանալ կայ. որով ուրիշ աղբիւր մը կ'ենթադրուի :

Կ. Յ. ԲԱՍՄԱՃԵԱՆ

Պրէս 4 յուլի 1897:

ՏԵՂԵԿԱԿԱՆ ԹԻՒՆՔ

ՎԱՆ ԱՅ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻԱՆ Յ ՎԵՐԱՅ

Այս յօդուածն թարգմանութիւն է՝ « Note on the Van inscriptions » խորագրով այն գրուածքին, որ հրատարակուեցաւ *Journal of the Royal Asiatic Society*, 1897, յուլիսի պրակին մէջ : Թողուածագիրն է մոյմ ինքն ծաւոթ մասնագէտ և բամասէր Պր. Կ. Յ. Բասմաճեան, որուն սրամիտ ամբարդարծութիւնքն և ուղիղ ըմբերցմունքն անկապալէս բնեւորագիր արծանագրութեանց, թէ ազգային և թէ եւրոպացի մասնագիտաց համակրամաց արժանացած է. իսկ Պարիսու այս վերջին Արևելագիտաց Համաժողովոյն մէջ՝ Դոկտ. Ստրիգովսկի և Պրոֆ. Սէյս մեծ գովանտով խօսեցան տաղանդաւոր բանասիրիս Բիւզանդեան արծանագրութեան մի վրայ խօսած բամախտութեան մկատամմը :

Յ ՈՐՄԷ հետեւ եւրոպացի գիտնականք սկսան բնեւորագրաց քննութեամբ պարապիլ, մասնաւոր ուղարկութեան նիւթ ըրին Հայկական կամ Վանայ բնեւորագիր արձանագրու-

թիւնները. և ինչպէս ամենուն ծանօթ է առաջինն եղաւ զժաղզ Եւլցը՝ որ օրինաւ կեց ու հաւաքեց Վանայ արձանագրութիւնները : Այս լի վրիպակներով ընդօրինակու թեանց վրայէն ուսումնականք սկսան իրենց քննութիւնները : Մորթմանէն, Ռոբերտէն և Լընորմանէն ետքը՝ Պրոֆ. Սէյս կարգաց ու հրատարակեց, ըստ կարելոյն, թէ իւր և թէ իւր նախորդաց քննութիւնները :

Պրոֆ. Սէյս մեծ ծառայութիւն մատուց գիտութեան, Եւլցի ըրած ընդօրինակութիւնները Լէյարդի, Գէլլիլի և այլոց բրած ընդօրինակութեանց հետ բաղդատելով. քիչ մը աւելի ետքը Գ. Հ. Միւլլէրին և Ս. Գիլյարին գիտողութեանց համեմատ, իրեն մէկ քանի վրիպակները ուղղեց : Գիլյար, բաց յայլոց՝ տարբերութիւն մը ևս գիտեր էր Ա-Լի-է բառին ընթերցման մէջ, զոր Պրոֆ. Սէյս կարգացեր էր Ա-դա-է : Սակայն այս խօսքին իմաստը մի է նոյն կը մնայ, ինչ որ էր սկիզբները, այսինքն « կըսէ » :

Գրեթէ ամեն տեսակ բնեւորագրութեանց սկիզբն, թէ Ասորեստան-Բաբելոնեան, թէ Շօշական, թէ Մարական և թէ Աքեմենեան, հասարակ ձև մը կայ (general formula), ինչպէս անակոչ X... Ասորեստան-Բաբելոնացւոց մէջ, ու X... Շօշացւոց և Մարաց մէջ, ադամ X... Աքեմենեանց մէջ, և այլն :

Այս բանաձևը Հայաստանեան արձանագրութեանց մէջ չի գտնուիր. բայց որովհետեւ Ասորեստան-Բաբելոնեան արձանագրութեանց մէջ կը գտնուի որ անակոչ անձնական գերանունը պարբերութեանց վերջը կը գործածուի, և ուսումնականք կը հաստատեն թէ Ալարասա-Նաիրիեանք իրենց գրութեան ռճը ասորեստանցիներէն առեր են, մենք այս հետեւանքը կը հանենք՝ թէ հայ արձանագրութեանց Ա-Լի-է բառը նոյն արժէքը ունի, ինչ արժէք որ ունի Ասորեստան-Բաբելոնեան արձանագրութեանց անակոչ անձնական գերանունը : Շօշացւոց և Մարաց ու Աքեմենեանց ադամը, որ կը նշաւ նակէ « Ժս » : Ուրեմն պէտք է թարգմանենք այս հաստատճը Argistis, alie, haubi

𐎧 X, 𐎧𐎶𐎶 X) = « Ես Արդիշտիշ, տիրեցի
երկրին X, քաղաքին X », ինչպէս կը
գտնենք ասորեստաներէն Անակու, 𐎶 X, ակ-
շոօք մատ X, ակու X : ի նպաստ այս

կարծեաց հոս մէկ քանի օրինակներ դնենք
վանեան ձեւը Բաբելոնեանին հետ համե-
մատելով.

ՎԱՆԵԱՆ

ԲԱԲԵԼՈՆԵԱՆ

Ա

Ա

Menuani Išpuiniehi,
erilaš¹ taraie,
erilaš alsuini,
erilaš ebanaue² Biaina(u)e,
alusi paumri³ Dhušpae.
Menuaš Išpu(i)nihiiniš,
A-LI-E, . . .⁴

Hammurabi,
šar dannu,
šar Babilu,
šar muštešmi
kibratim arbaim
.
A-NA-KU.

(Հաստատութիւն?) Մենուաչայ իշպուի-
նեայ, հզօր արքայ, մեծ արքայ, արքայ եր-
կրին վանայ, իշխան Տոսպայ : Մենուաշ
իշպուինիշեան, Ես . . . :

Համմուրաբի, հզօր արքայ, արքայ Բա-
բելոնի, որ հնազանդեցոյց ինքեան զքա-
նեակ նահանգս, . . . Ես :

Բ

Բ

Sardurini Argistilhi,
erilas taraie,
erilaš alsuini,
erilas ebanaue Biainaue,
alusi paumri Dhušpa,
Sarduris, A-LI-E, . . .⁵

Nabukudurriuşur,
šar Babilu, . . .
palib Bel Beli, . . .
abal kini ša Nabupaluşur,
šar Babilu,
A-NA-KU.

(Հաստատութիւն?) Սարդուրիշի Արգիշ-
տեայ, հզօր արքայ, մեծ արքայ, արքայ
երկրին վանայ, իշխան Տոսպայ : Սարդու-
րիշ, Ես . . . :

Նաբուդոդոնոսոր, թագաւոր Բաբելոնի, . . .
երկրպագու աստուծոյն աստուածոց, երէց
որդի Նաբուպալասորայ, արքային Բաբելո-
նի, Ես :

1. Եւ Էրիշաշ կը կարդամ (𐎧𐎶) « արքայ »
գաղափարանշանն, ըստ նոր գիւտին Բարձր Գի-
տութեանց վարժարանին հմուտ ուսուցչի, Վեր-
ձ. Շէյլի, իւր « Մեղազկերտի վանեան արձանա-
գրութեան » մէջ, ի թերթին Rec. trav. Egypt.
et Assyri., XVIII.

2. Փոխանակս 𐎧, վանեցի մեծը կը գտնենք
𐎧 Է-բա-նի, 𐎧 Է-բա-նա, 𐎧 Է-բա-նի-նա-
ն-է, և այլն :

3. Մեղազկերտի արձանագրութեան մէջ կը

գտնենք, ինչպէս յըցուց Պրոֆ. Շէյլ, 𐎧𐎶𐎶
Տու-ռ-շ-պա-սա պա-սա դոււ-րի, փոխանակ
𐎧𐎶𐎶 Տու-շ-պա 𐎧𐎶𐎶, որ այս քաղաքին յա-
տուկ մասնաւոր ձև մըն է. ուստի գտնուեց միա-
ցընելով կրնանք կարգով պաղտապրի կամ լա-
ւա պատմորի :

4. Հմտ. Schulz XIII, XIV, և XV, 4-10;
Sayce, XX.

5. Հմտ. Mühlbach (Monatsb. Verh. Ge-
sellschaft, Erd. zu Berlin, 1841 pp. 70-75,
II. 32-34); Sayce, L.

վերը տուած օրինակներու մէջ արքայ բառին կրկնութիւնը՝ ուրիշ արձանագրութեանց մէջ ալ կը գտնուի անձնական գերանուան առաջին գէմբով (Ես) գործածուած : Այսպէս

նոյնը կը գտնենք Շօշի մեծ արձանագրութեան սկիզբն, որ « Սուտրուկ-Նախունակ »-ի կը վերաբերի, և որ ամենէն աւելի նմանութիւն ունի վանեան գրութեան.

Վ Ա Ն Ե Ա Ն

Շ Օ Շ Ե Ա Ն

Sardurini Argistihi,
erilaš tاراie,
erilaš alsuini,
erilaš ebanauē Biainaue,
alusi paumri Dhušpa.
Sarduriš, A-LI-E,...

U Sutruk-Nahhunte šak Halluduš
ans' in šušinak
gik libak
gik šunkik anzan šušunqa
an' in šušinak...
U Sutruk-Nahhunte...

Նոյն :

Ես Սուտրուկ-Նախունակ, որդի Հալու-
զուի, արքայ Շօշացոց, հօր Տէր, Տէր՝
որ տիրէ Շօշի երկրին : Արքայ Շօշացոց...
Ես Սուտրուկ-Նախունակ¹

Ինքն առարկուի որ « Ասաց Ք արքայն... »
ձևը Աքեմենեանց մէջ ալ գործածական է.
կը պատասխանենք, նախ՝ Աքեմենեանց իշ-
խանութիւնը կիրառող կը սկսի (560 Ն.
Ք.), և եթէ Ուրարտեանց սկիզբը չենք
գիտեր, գիտենք Տեղաթ-Պիլեսերի Ա (1123
Ն. Ք.²) արձանագրութիւններէն՝ թէ Ու-
րարտուի թագաւորութիւնը այս թագաւորի
իշխանութեան ժամանակ կար, հետեւաբար
Ուրարտեանք չէին կրնար Աքեմենեանց ար-
ձանագրութիւնները իրենց օրինակ առնուլ :
Երկրորդ՝ ինչպէս վերը ցոյց աուինք՝ էական
գերանուան առաջին գէմբը միշտ կը գտնուի
Ասորեստան-Բաբելոնեան, Շօշական, Մա-
րական և Աքեմենեան արձանագրութեանց
մէջ. եթէ այս վերջինս « Ասաց Ք արքայն... »
ձևը ի կիր կ'առնու, « Ես Ք արքայ » ձևին
շարունակութիւնն է. օրով կը հետեւի թէ
Այրարատ-Նախիբեանց մէջ բառ մը կար,
որ այս գերանուան առաջին գէմբը կը նշա-
նակէր. և արդեամբք ալ բոլոր վանեան

արձանագրութիւնները քննելով, չենք զեա-
ներ ուրիշ բառ մը՝ որ աւելի լաւ յարմարի
բան գտնուի, յորմէ առաջ միշտ առաջին
գէմբով բացատրութիւններ կան : Այսպէս
մենք բոլոր վանեան արձանագրութիւնները
քննեցինք և գտանք որ Ա-ԼԻ-Է բառը՝ առա-
ջին գէմբով պարբերութեան մէջ ետեւանա-
սուենաւթ անգամ յիշուած էր, և միայն
երեք³ անգամ յիշուած էր երրորդ գէմբով
պարբերութեանց մէջ, որ անստորակոյս զը-
չաց սխալ մ'է :

1. Ընդօրինակութիւն և թարգմանութիւն
Հռչակաւոր ուսուցչին ի Collège de France,
Պրն. Ուպլերտի :

2. Բառ Բաւիւնի արձանագրութեան. առ-
կայն բառ Պրն. Ուպլերտի այս գրութիւնը չէ
ստուգուած, և պէտք է մերձաւորապէս Ք. Ա.
1230 տարւոյն ըլլայ :

3. Հմտ. Schulz XVI. XL և XLI.

